




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«29» փետրվարի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ  Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-94/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.05.2016թ. թիվ 1/73-3/14032-16, 15.06.2016թ. թիվ 1/73-1/16429-16 և 18.04.2016թ. թիվ 1/73-1/12352-16 գրություններով ներկայացված «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01543209) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), «ՀՀ Արարատի մարզի Գոռավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, Աբովյանի քաղաքապետարանի և Աշտարակի քաղաքապետարանի համապատասխանաբար

15.04.2016թ. թիվ 64 և 04.05.2016թ. թիվ 69, 13.06.2016թ. թիվ Ե-1512, 16.02.2016թ. թիվ 247 գրությունների հիման վրա, 12.05.2016թ. թիվ 1/73-3/14032-16, 15.06.2016թ. թիվ 1/73-1/16429-16 և 18.04.2016թ. թիվ 1/73-1/12352-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Նույն գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել Պատվիրատուների վերը նշված գրությունները՝ կից ներկայացված փաստաթղթերի պատճեններով:

2. «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 17.05.2016թ. թիվ 01/04.1/1896-16, 22.04.2016թ. թիվ 01/04.1/1619-16 և 22.06.2016թ. թիվ 01/04.1/2422-16 գրություններով դիմել է «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ին:

Ընկերությունը 02.06.2016թ. թիվ 1-19 գրությամբ (պատվիրատու՝ «ՀՀ Արարատի մարզի Գոռավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ) հայտնել է, որ «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ի գնումների գործընթացը կազմակերպող և համակարգող աշխատակիցը գնումների կազմակերպման ընթացակարգի վերաբերյալ համապատասխան հրահանգավորում չի անցել, որի պատճառով էլ թույլ է տվել մի շարք խախտումներ: Հիմնական խախտումներից մեկը կայանում է նրանում, որ Ընկերության աշխատակիցը հայտը պատրաստելիս՝ հաշվի չի առել պետական բյուջեի նկատմամբ առկա պարտավորությունները:

«Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ն 29.04.2016թ. թիվ 01/14 գրությամբ հայտնել է, որ մասնակցել է Աշտարակի քաղաքապետարանի կողմից

հայտարարված «ԱԲ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/1/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին և ներկայացրել է հայտարարություն պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորություն չունենալու վերաբերյալ: Ընկերությունը նշել է, որ հայտը ներկայացնելու պահին ունեցել է շահութահարկի գծով 39033,8 ՀՀ դրամի չափով գերավճար և դիմել է հարկային տեսչությանը առկա պարտավորությունները գերավճարի հաշվին մարելու վերաբերյալ: Հայտի ներկայացումից հետո պարզվել է, որ գործող օրենսդրությամբ շահութահարկի գերավճարի հաշվին այլ հարկատեսակների գծով պարտավորությունները մարվել են կարող: Ընկերության կողմից 2016թ. փետրվարի 12-ին մարվել են բյուջեի հանդեպ ունեցած պարտավորությունները և հաղթող ճանաչվել Աշտարակի քաղաքապետարանի կողմից հայտարարված մրցույթի 4-րդ և 11-րդ չափաբաժինների գծով:

Աշտարակի քաղաքապետարանի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը հարցում կատարելու պահի՝ 16.02.2016թ. դրությամբ Ընկերությունը պետական բյուջեի հանդեպ պարտավորություններ չի ունեցել:

«Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ն ի լրումն 29.04.2016թ. թիվ 01/14 գրության 10.05.2016թ. թիվ 1/15 գրությամբ ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԳ Արտաշատի տարածքային հարկային տեսչության 02.05.2016թ. տրամադրված տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 16.02.2016թ. դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. «ՀՀ Արարատի մարզի Գոռավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«ՀՀ Արարատի մարզի Գոռավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 15.04.2016թ. թիվ 64 և 04.05.2016թ. թիվ 69 գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությանն է տրամադրել «ԱՀԴ-ՇՀԱՊՁԲ-15-1-55-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ փաստաթղթերը:

4. Աբովյանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Աբովյանի քաղաքապետարանը 13.06.2016թ. թիվ Ե-1512 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ի հայտի պատճենը և Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ փաստաթղթերը:

5. Աշտարակի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Աշտարակի քաղաքապետարանը 16.02.2016թ. թիվ 247 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ուղարկել «ԱԲ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/1/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

6. ՍՑ-ԳԲԽ-94/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 12.05.2016թ. թիվ 1/73-3/14032-16, 15.06.2016թ. թիվ 1/73-1/16429-16 և 18.04.2016թ. թիվ 1/73-1/12352-16 գրություններով ներկայացված «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ Արարարի մարզի Գոռավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԱՀԴ-ՇՀԱՊՁԲ-15-1-55-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նախ

Ընթացակարգ 1), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ն:

• Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ն 28.12.2015թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, իսկ հայտի N 34 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

• Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի 29.12.2015թ. ժամը 14:00 տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 1.5-րդ կետով որոշվել է ներկայացված հայտի հիման վրա Ընթացակարգ 1-ի 9-րդ չափաբաժնով նախատեսված՝ «Կոմպոս» ապրանքատեսակի մասով որպես 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ին:

• Պատվիրատուն, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ի վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ Նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ն **2015թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **1 840 503 ՀՀ դրամի** չափով, միաժամանակ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ **5 420 660 198 ՀՀ դրամ**, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է **2 018 200 367 ՀՀ դրամ**:

• Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի կողմից 18.01.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու պահի դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

2. Արժվանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԱԲՔ-ՇՀԱՊՁԲ-10/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ն:

• Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ն 13.01.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

• Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի 18.01.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2.2 արձանագրության 1-ին կետով սահմանված հավելված N 1-ի համաձայն որոշվել է 20-րդ չափաբաժնով (տոմատի մածուկ) և 60-րդ չափաբաժնով (ջեմ) որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ին:

• Պատվիրատուն, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ի վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը **2016թ. հունվարի 13-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **1 884 216 ՀՀ դրամի** չափով:

- Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի կողմից 22.01.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով որոշում է կայացվել Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժել, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. Աշխարհի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԱԲ-ՇՀԱՊԶԲ-15/2-16/1/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 3), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ն:

- Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ն 22.01.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալներով համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովի 04.02.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով որոշվել է 8-րդ չափաբաժնով (տոմատի մածուկ) և 20-րդ չափաբաժնով (ջեմ) որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ճանաչել «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ին:

- Պատվիրատուն, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը **2016թ.**

հունվարի 22-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **5 125 128 ՀՀ դրամի** չափով:

- Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովի կողմից 11.02.2016թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով որոշում է կայացվել Ընկերության հայտը մերժել, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքով:

5. ՍՑ-ԳԲԽ-94/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.05.2016թ. թիվ 1/73-3/14032-16, 15.06.2016թ. թիվ 1/73-1/16429-16 և 18.04.2016թ. թիվ 1/73-1/12352-16 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Հայաստանի Բորողինո պահածոների գործարան» ՍՊԸ-ի 02.06.2016թ. թիվ 1-19 և 10.05.2016թ. թիվ 1/15 գրությունները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում **ներկայացրել է կեղծ տվյալ:**

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումները բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

- 1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և
- 2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց հ հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

- 1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից **հայտը ներկայացվելուն նախորդող՝**

բ. հաշվետրու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ **6 ամիս ժամկետով**, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե **Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ** կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Այսպիսով, «ՀՀ Արարատի մարզի Գոռավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Արովյանի քաղաքապետարանի և Աշտարակի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել են համապատասխանաբար՝ «ԱՀԴ-ՇՀԱՊՁԲ-15-1-55-2», «ԱԲԲ-ՇՀԱՊՁԲ-10/15» և «ԱԲ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/1/2» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգեր:

Ընկերությունը **հայտերի N 2 հավելվածներով** Ընթացակարգ 1-ին, Ընթացակարգ 2-ին և Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով իրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություններով, հայտնել և հավաստել է, որ հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ (28.12.2015թ., 13.01.2016թ., 22.01.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադր

սոցիալական ապահովության վճարների գծով, իսկ 28.12.2015թ. ներկայացրած հայտի N 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Պատվիրատուները, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել են Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ի վերաբերյալ, ի պատասխան որի՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուներին տրամադրվել են եզրակացություններ, համաձայն որոնց Ընկերությունը **2015թ. դեկտեմբերի 28-ի, 2016թ. հունվարի 13-ի և 2016թ. հունվարի 22-ի դրությամբ (հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ) ունեցել է ժամկետաց հարկային պարտավորություններ համապատասխանաբար՝ 1 840 503 ՀՀ դրամի, 1 884 216 ՀՀ դրամի և 5 125 128 ՀՀ դրամի չափով:**

Բացի այդ, Ընկերության հայտը ներկայացնելուն **(28.12.2015թ.)** նախորդող հաշվետու տարվա **(2014թ.)** ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ **5 420 660 198 ՀՀ դրամ**, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ **2 018 200 367 ՀՀ դրամ:**

Այսինքն, Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ի վերը նշված Ընթացակարգերին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտերի N 2 հավելվածներով, իսկ Ընթացակարգ 1-ին ներկայացրած հայտի նաև N 3.4 հավելվածի «բ» կետով արված հայտարարությունները հանդիսանում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Կենտրոնն արձանագրում է, որ «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը **28.12.2015թ.** մասնակցելով «ԱՀԴ-ՇՀԱՊՁԲ-15-1-55-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում և **13.01.2016թ., 22.01.2016թ. կրկին հայտեր է ներկայացրել** համապատասխանաբար «ԱԲԲ-ՇՀԱՊՁԲ-10/15» և «ԱԲ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/1/2» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին մասնակցելու համար, որոնց շրջանակներում ևս ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում:

Այսպիսով, Կենտրոնը գտնում է, որ Ընկերության կողմից խախտվել են Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, այն է՝ **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում Ընկերությունը ներկայացրել է կեղծ տվյալ, որը հիմք է «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար:**

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 12.05.2016թ. թիվ 1/73-3/14032-16, 15.06.2016թ. թիվ 1/73-1/16429-16 և 18.04.2016թ. թիվ 1/73-1/12352-16 գրություններով ներկայացված «Հայաստանի Բորոդինո պահածոների գործարան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01543209) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 ամիս ժամկետով:


«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝




Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՅ-ԳԲԽ-94/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Գրիգորյան